ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔ

<< 22 >> հունիսի 2018 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 22 - ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԹԻՎ 6 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էին ավագանու անդամներ Ս. Աբրահամյանը, Հ. Բարսեղյանը, Ա. Գասպարյանը, Ն.Դարբինյանը, Հ.Դոլինյանը, Է. Իսրաելյանը, Ա. Հակոբյանը, Լ. Հարությունյանը, Խ. Հարությունյանը, Օ. Հարությունյանը, Վ. Հովհաննիսյանը, Ռ. Մարգարյանը, Ա. Մելոյանը, Ա. ՈՒմուրշատյանը, համայնքապետի տեղակալներ Մ. Բաղդասարյանը, Խ. Մկրտչյանը, համայնքապետի առաջին օգնական Ա. ՈՒմուրշատյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժինների պետերը և ԶԼՄ ներկայացուցիչները:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Ռուբեն Խլղաթյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավար Ռուբեն Խաչիկի Խլղաթյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ արձանագրություն կազմելու մասին:

Զեկ.՝Ռ. Խլղաթյան

Ավագանին 14 կողմ, 0 դեմ , և 0 ձեռնպահ քվեարկությամբ հաստատեց օրակարգի նախագիծը 1 հարցով (կցվում է):

Օրակարգային հարցի հետ կապված համայնքի ղեկավար Ռուբեն Խլղաթյանն ավագանուն ներկայացրեց համայնքի ղեկավարի իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ հայտարարություն :

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, 26-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 3-րդ մասով՝ համայնքի ավագանին ընդունելով համայնքի ղեկավարի հրաժարականի վերաբերյալ

հայտարարությունը ՝ որոշեց բավարարել այն և կազմեց Արմավիր համայնքի ղեկավար Ռուբեն Խաչիկի Խլղաթյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ սույն արձանագրությունը՝ << Արմավիրի մարզպետին սահմանված կարգով ներկայացնելու համար:

Ավագանին 10 կողմ, դեմ 4, և 0 ձեռնպահ քվեարկությամբ հաստատեց արձանագրությունը :

Կողմ (10)	Դեմ (4)	Ձեռնպահ (0)
Բարսեղյան Հ.	Աբրահամյան Ս.	
Գասպարյան Ա.	Մարգարյան Ռ.	
Դարբինյան Ն.	Հարությունյան Խ.	
Դոլինյան Հ.	Հարությունյան Լ.	
Իսրաելյան Է.		
Հակոբյան Ա.		
Հարությունյան Օ.		
Հովհաննիսյան Վ.		
Մելոյան Ա.		
Ումուդշատյան Ա.		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԼՂԱԹՅԱՆ

2018թ. հունիսի 22
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիրի քաղաքային համայնք, Հանրապետության 32

Հեռախոս՝ (0237) 2-36-54

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒՆ

Դ Ի Մ Ո Ւ Մ

Խնդրում եմ ընդունել իմ հրաժարականը՝ Արմավիր համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.Խ.ԽԼՂԱԹՅԱՆ

22 հունիսի 2018թ.